

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

826 ԼՅԱԶԿՈ

ԿԱՆԴԱԼՆԵՐԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԽՈՀԻՐ ԺՈՂ. ԿԵՆՏ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐՈՍԿԱ. 1927

8

ԱԿԱՆԵ Ն.



ԿԱՆԴԱԼԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

A 38565/15689



ԽՍՀ ԳՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ, 1927

Թարգմ. Հ. Տեր-Գելուրջյան



Главлит № 82446

Тираж 2000 экз.

Заказ № 1919

I

Ալեկսեյ Անիկանովին կաշկանդեցին հին, մի
ուրիշի վոտքերի վրա հղկված, պսպղուն կանդալ-
ներով։ Նրանք կոփված եյին վաղուց, կուբանում։
Ալեկսեյը տեղեկացավ այդ մասին Սիրիլում՝ կա-
տըրժնի բանտում։ Բակում նրան կանգնեցրեց մի
ծեր կատրժնիկ*, կռացավ, շոշափեց կանդալներն
և ուրախ բացականչեց.

— Ե՞հ...Ե...Ե... սրանք հո իմ կանդալներս են...
Զայնից ճանաչեցի։ Լսում եմ՝ ինչ վոր ծանոթ
ձայն, եւ կուբանում տասնեհինգ տարի սրանից
առաջ եմ կըել։ Այն ժամանակ դեռ նոր եյին,
դերբուկ եյին։ Իսկ ինձնից առաջ մի վրացի եր
զրնգում դրանցով։ Նա փախավ ուղղակի կամե-
րից**, իսկ կանդալները թողեց այնտեղ։ Հենց
այդ ժամանակ ել ինձ դատապարտեցին և յես
տեր դարձա դրանց։ Իսկ յերբ ինձ կատրգա քշե-
ցին, մի տեղ բաղնիսում քափ-քրտնեցի, վոտքերս
սապնեցի, չանգուելով արնահոս արի, կանդալները
հանեցի և թախտի տակ թագնվեցի։ Մենակ յես

* Տաժանակիր աշխատանքի դատապարտված անձ։

** Կամերա—բանտի սենյակ։

չելի—այլ յերեք հոգով ծլկվեցինք այն ժամանակ:
Ե՞ս, անմոռանալի որեր եյին...

Հիշողություններն արբեցրին ծերունուն, աղոտ
աչքերը պսպղացին, ինչպես լուսիններ մշուշի
միջից։ Նա աչքով արեց Ալեկսեյին, թոթվեց նրա
ուսը և պվելացրեց.

— Ինքդ ջաճել ես, իսկ կանդալներդ բախտա-
վոր են։ Հասկանում ես, բախտավոր կանդալ-
ներ են...

Այն լուրը, վոր ծերունին տասնեհինգ տարի
անց՝ ձայնից ճանաչեց իր շղթաները, բոլոր կա-
մերները թափանցեց։ Հարկավ, բոլորը չհավատա-
ցին նրան, բայց ծերունին ցրեց նրանց կաս-
կածները—կանդալների մեծ կոճղի վրա դեռ մնա-
ցել եր նրա դրած նշանը։

Այդ հանգամանքը ծերունուն աչքի գցեց կա-
տըրժնիկների ընդհանուր մասսայում և բոլորի
ուշադրությունը հարեց կանդալների վրա։ Ո՞վ ե
հնարել դրանք։ Ո՞վ ե կոփում դրանք։

Բանտի արհեստանոցում կանդալներ և ձեռքի
փականքներ կոփող, մահապատիժների շապիկներ
կարող բանտարկյալներին շատ-շատերն են անի-
ծել։ Կատրժնիկների մի մասը ավելի սըրտմանց
և տիրեց։ Իսկ մյուս մասը ճշմարտությունը յե-
րես-յերեսի տեսավ—ինքներս ենք մեզ համար
բանտեր կառուցում, ինքներս ենք մեզ համար

շղթաներ կոփում և նրանցով կաշկանդում մեզ,
ինքներս ենք մահապատիժների շապիկներ կարում,
ինքներս ենք մեզ կախում։ Ամեն ինչ ինքներս...
ինքներս...

II

Ալեկսեյը տանեցիներին գրած նամակը կատա-
կով սկսեց, վոր ինքը բախտավոր կանդալներ ե
կրում։ Մի քանի տող գրեց և դեմքնկավ.—նա-
մակը թունդ և կծու դուրս յեկավ և նա ստիպված
եր գաղանի կերպով ուղարկել, թագցնելով բանտի
գրասենյակից։

Մատվեյը, Ալեկսեյի հայրը, լուակյաց և մոայլ
մի մարտոցահար, յերեք անգամ կարդաց նամակը
և, սպասելով մինչև վոր իր սրտում կհանգստանա
նամակի զարթեցրած այրող հուզմունքը, փընթ-
փնթաց.

— Շատ լավ...շատ լավ... այդպես...

Ալեկսեյին նամակներ գրում եր Մատվեյի մեծ
վորդին, կաթսայագործ Վասիլին։ Մատվեյը սո-
վորաբար չեր հետաքրքրվում նամակներով—բո-
վանդակությունը միշտ նույնն եր—բարեներ և
բարեներ։

III

Կանդալներ կրելու ժամանակը ծանր եր, բայց
Ալեկսեյը կայտառ եր։ Դեռ դատարանում, դա-

տավճիռը լսելիս, նա իրան ասաց.—«Դե, Ալյոշկա,
պինդ կաց, չմղկտաս»։ Յեվ իսուքը պահեց.—
Հնայած բոլոր տանջանքներին, նա չեր մոռանում,
վոր ինքը դեռ միայն 22 տարեկան է, վոր կյանքը
դեռ իր առաջն է։ Չեր մոռանում և մի այլ,
մարդկանց մեջ հազվագյուտ, թանկագին բան—
վոր լացով ու վողբով կյանքը չի պայծառանա,
սեփական ցավերը չես թեթևացնի, մարդկանց
ավելի յերջանիկ չես դարձնի։

Կատրժնի բանտում նա իրան այնպես եր պա-
հում, կարծես թե իր կյանքը դեռ չեր սկսվել,
կարծես թե կալանքն ու շղթաները լոկ նախա-
պատրաստություն եյին նրա համար։ Կամերում
մի քանիսները զգում եյին, վոր նրա հոգին,
հրճվանքով լի, փոխարինում ե գալիքը, ցնորքի
փայլով քողարկում ե կյանքը՝ իր հոգսերով և
կեղտով, և վոր նա առաջ ե գնում իր ընտրած
ուղիյով, կարծես իր առաջ վոչ պատեր և վոչ ել
վանդակներ լինեյին, կարծես թե վոտքերը շղթայ-
ված չլինեյին։

Մտքով նա ազատության մեջ եր, մարդկանց հետ,
հետեւում եր իրան և ջանում եր հասկանալ թե
արդյոք չի թեքվի իր վերցրած բեռան տակ, չի
խորտակվի, չի դավաճանի, չի խաչի այն՝ ինչին
վոր հավատում է։ Յեվ նա արիանում եր, պատ-
րաստվում եր։

Մարդկանց հետ նա ուղղամիտ եր և սրտա-
բաց, չեր հանդուրժում բանտապեսի և հսկիչների
ծանակները։ Հաճախ բոնկում եր և հաճախ ել կար-
ցեր նստում։ Հաճախ գանակոծվում եր, բայց
նրա մեջ չմարվող կյանքը հաղթում եր ցավին
ու տանջանքներին, և այն որը, յերբ նա դուրս
յեկավ բանտից իբրև աքսորաբնակ, առողջ եր։
Դեմքը պատած եր անմաքուր դալուկով, քոնքերի
վրա ջիլեր եյին յերևում, բայց կապույտ աչքերը
շողշողում եյին ինչպես առապար վայրում բսած
ծաղիկներ, և թարմ, պատրանքով լի՛ փայփլում։

Գրասենյակում, վերջին խուզարկության ժա-
մանակ, բանտապետը հարցրեց.

— Անիկանով, դիմացանը։

— Դիմացա։

— Տես, ուրիշ անգամ չես դիմանա։

— Ուրիշ անգամ ել կդիմանամ։

Բանտապետն աչքերը հառեց Ալեկսեյի վրա,
նայեց նրա կապոտած կանդալներին և հեգնորեն
հարցրեց.

— Կդիմանամս... Սեփական կանդալներով կա-
տըրգա կգաս... Չեն ոգնի...»

— Կանդալները յես նմուշի համար եմ տա-
նում, — խուլ պատասխանեց Ալեկսեյը։ Դուրսը
կանդալներ շինելով կզբաղվեմ։ Ո՞վ գիտե թե
շուտով ելի ում պետք կգան նրանք։

Բանտապետն ակնարկը հասկացավ, աչքերը
հպեց, բայց իրան հավաքեց և վրա բերեց.

— Այդ ել գործ ե...

IV

Անիկանովներին ծանուցագիրը հանձնեցին շա-
բաթ որ. կիրակի Վասիլին գնաց փոստատուն և
բերեց կտավի մեջ կարած մի արկղ.

Ալյոշկայից ե ստացված:

Տանեցիք խմբվեցին սեղանի շուրջը. Վասիլին
կտավը ճղեց միս կտրտելու դանակով, արկղի
խուփը վերցրեց և պինդ խոթած հոտավետ բուր-
բուշների միջից դուրս հանեց թոկով կապած
կանդալները: Նրա մատները սահում եյին հան-
գույցների վրայով: Կանդալները թուլացած թո-
կերի տակ ոճի պես գալարվում եյին և թոկի տա-
կից դուրս պրծնելով խուլ դողանջեցին: Նրանց
միջից դուրս ընկան կանդալների խամութներից
հղկված և պինդ վոլորված կաշվե կանդալատա-
կեր: Նրանք կապված եյին փափուկ թասմայով,
վորը թումբից դեպի գոտին եր ձգվում և այդ-
պիսով շղթան ողումն եր պահում:

Շոշափում եր ողակները, շարժում եր, բացում
և փակում եր խամութները: Կանդալատակերը
հարթեց, մատն անցկացրեց խամութների փորած
ակոսներով և անշարժացավ: Վասիլիյի խոսքերը

գրգռում եյին նրան: Մեծ, ուժեղ, զիջանող,
միշտ քնեքուն, նա Մատվեյին թվում եր կար-
ծես թե փայտից շինված լիներ: Ալյոշկայի հատը
չեր: Նա սովորում եր, ամեն ինչին իր խելքով
եր հասնում: Նրան տոն որը փոստատուն չեյիր
ուղարկիլ—առավոտվանից գնում եր և զիշերով
վերադառնում: Բոլորի համար բարձրաձայն կար-
դում եր... Եհ...

Ալյոշկայի դատը, նրան կատրգա ուղարկելը՝
Մատվեյի մազերը սպիտակեցրին և ճաղատու-
թյունը ականջներին հասցրին, իսկ սրտում անշեշ
կրակ վառեցին: Ցավս այնքան մեծ եր, վոր ծնոտ-
ները վոլորում և գանգատի խոսքերն՝ արցունքների
հետ միասին, այլում եր.—թող այդպես լինի: Այն
լրագիրը, ուր տպված եր դատարանում վորդու ար-
տասահած ճառը, Մատվեյը միշտ մոտն եր պահում,
և յերբ տանը վոչ վոք չկար, կարդում եր նորից...

Կանդալները շոշափելիս նա ներկայացնում եր,
թե ինչպես եյին նրանք սեղմում ջահել վոտքերը:
Ալյոշկան պատկերանում եր նրան պստկացած, ցա-
վից փոքրացած, զերությունից ձնշված: Բայց
անձնատուր չի լինում: Գեթ գրկել նրան, մատ-
ներով շոշափել նրա կողքածաղերը, վորպեսզի
զվարթ ծիծաղեր նա և մորուքից քաշեր...

Հետևյալ որը Մատվեյը ճաշի ժամանակ աշ-
խատանքից բերեց ոլեռնավթով ծծված վուշի մի

կտոր, յուղեց նրանով կանդալները, դարսեց արկղում և դրեց Ալյոշկայի գրքերի մոտ, դարակի վրա:

V

Գործարանում կանդալների մասին տեղեկացան վասիլիյից: Հարևան դազգահի վրա աշխատողները և ծանոթները խնդրում եյին Մատվեյին գործարան բերել դրանք: Հասակավորները խնդրում եյին հանգիստ, ջահելները—թափով: Մատվեյը միշտ հրաժարվում եր:

— Տեսնելու ի՞նչ կա... չարժե, — բայց ամառվա վերջը զիջեց. — Դե լավ, մաղթանքի ժամանակ կբերեմ, համբերեցեք:

Գլխավոր գործարանը հավաքարան եր: Այնտեղ պարավոզներ եյին շինում: Վիթխարի, յերկաթե ուղիներով, թոշող կոնդորայի նմանող ելեքտրական չանգով: Արևից և անձրևից՝ փայլարի նմանված ապակե տանիքի յերեք շերտեր ծածկում եյին դազգահների շարքերը—սկսած բոլտից մինչև գլանակ կտրտելու համար, — թերի նման փոփած քյարգահները, շղթաները, պարավոզի մասերը և մավթուլի ցանցով առանձնացրած գործիքների պահեստարանը:

Գործարանի գլխավոր մուտքի վերև, ներսից, սրբի պատկեր կար կախված—կապույտ յերկինք,

մոխրագույն ամպեր, և նրանց վրա աստվածածինը՝ հաշեյակար շղարշով: Աստվածածնի որը գործարանի ամենահանդիսավոր տոնն եր:

VI

Մաղթանքին շատ կային յերգեցողություն սիրողներ, և յերգեցիկ խումբը (խմբում յերգում եյին նաև բանվորներ) ջանում եր, վոգեվորված եր: Նրա ճայթյունները զարնվում եյին համրկոնդորի թևերին, ապակե տանիքին և դղրդում եյին ամբոխի մեջ: Դազգահների շարքերը, անկյունները, տանիքի ծողերը—արձագանք եյին տալիս որգանի նման:

Արևաշտության մաղթանքի վորոտալից ճայթյունների ժամանակ նույնիսկ դազգահները կարծես թաթերի վրա եյին բարձրացել, վորպեսզի տեսնեյին կարմրատակած տիրացուին և կատաղած, հնչյունների մեջ հալչելու պատրաստ, խումբը: Պարավոզի և նրա կառուցողների վրա սրսկիչից որհնած ջրի ցուլս ցալքուններ թափվեցին:

Գործարանի կտորավարիչները, ինժեներները, վարպետները շտապ դիմեցին դեպի դիրեկտորը: Նա պսպղում եր քորոցով, փայլվլում եր սպիտակեղենով, մազերի սանդրոցով, շարժում եր զլուխը, ընդունում եր շնորհավորանքներ և ցու-

ցադրում ծխախոտից սևացած ատամները։ Վարպետների ոգնականները, տեխնիկները, մանայորները և բրիգադիրները չելին համարձակվում մոտենալ նրան, բայց աշխատում ելին նրա աչքին ընկնել, մի քանի անգամ գլուխ ելին տալիս և աշխատում ելին չնկատել բանվորների ծաղրն ու հայցքները։

Ամբոխը սայթաքում եր յերկաթի, չուզունի և բալկաների վրա, գրոհ եր տալիս դեպի խաչը, ավետարանն ու սրբի պատկերը։ Հյուրերը, կանայք և մանուկները ցըվեցին գործարանում և դիտում ելին դազգահները։ Խումբը լռեց...

Հավաքարանի հանդեսը կարծես վերջացավ։ Յեվ հանկարծ ձայների դղրդյունը ձեղքեց մի զրնգոց։ Հավաքարանում վոչինչ այդպես չեր զրնգում։ Շատերը յետ դարձան։ Ծայրի դազգահի մոտ կանդալներ բռնած Մատվեյի շուրջը ամբոխ եր խոնվում։ Բոլորը մոտենում ելին, շոշափում, զննում, ողակներով զանգահարում ելին, վորոշում ելին թե ինչից ելին կոփած, և զարմանում ելին թե ինչպես ելին այդպես հղկվել վոտքերի վրա։ Ամբոխն արագ բազմանում եր և աղմկում։ Յետեից մեկը կանչեց.

— Եյ, բարձրացիր դազգահի վրա և այնպես ցույց տուր։

Կանդալներ բռնած խառարը ցատկեց դազգահի

վրա, և բուռվարի պես շարժելով կանդալները, պարզորոշ արտասահնեց.

— Ահա, մեր համքարի, խառատ Ալեկսեյ Անիկանովի կանդալները։ Նա կատրգայում այս կանդալներն ե կրել մեր գործի համար։ Այժմ ապրում ե իբրև աքսորաբնակ. գուցե շուտով կվերադառնա... Հասկանում եք, կվերադառնա...

Մի անգամ ել շարժեց կանդալները և վայրցատկեց աղմկալի ամբոխի մեջ։ Զեռքերը թափահարող դիրեկտորից բաժանվեց գրասենայկի կառավարիչը և վազ տվեց դեպի դազգահները։

— Ճանապարհ... ով եր խոսում։ Ի՞նչ եր ցույց տալիս։ Կանդալներ։ Ի՞նչ կանդալներ։ Այդ ի՞նչ խենթություն ե։ Վո՞ր Անիկանովի։

Խառարը Մատվեյի ձեռքից խլեց կանդալներն և անցկացրեց հարևանին։

— Անցկացրու մերոնց...

Նրանք ձեռքից-ձեռք սպրդելով և ամբոխի խորքում դողանջելով թագցրին կապույտ շապիկի տակ, ջահել, տաք մարմնի վրա և լռեցին։

Կանդալները ցույց տվող խառատին կես գիշերին բանար տարան։ Անիկանովների մոտ կես գիշերից մինչև լուսաբաց շաղորների զրնգոցներ ելին լսվում։ Սափրված բեխերավորներնիրերը քըքըռում ելին, վառարանը զննում, կտուրը նայում, դար-

պասին աչք ածում, լապտերով հետազոտում
եյին պարտիզի հողը, իսկ խոհանոցում հատակի
տախտակները բարձրացնում:

Զայրացան, մըթմըթացին, սպառնացին, բայց
կնացին դատարկ ձեռքով:

VII

Յերկրորդ անգամ կանդալները դողանջեցին
գործարանի սեղանատանը՝ նոր տարվա գիշերը:
Նատ բազմամարդ եր: Նվազում եր բանվորների
նվազախումբը: Զվարճության տաք ըռպեյին
նրբանցքի դռան առաջ խոնված ամբոխի միջից
դուրս պրծան կատրժնիկի հագուստով և Ալեկ-
սեյի կանդալներով մի մարդ և քաթանի զգես-
տով ու բուշատով մի կին: Իրար ձեռք տվին
նրանք և խրվեցին պարողների քառասուն զույգի
մեջ ու նրանց խլացրին կանդալների զրնգոցով:
Զույգերը բաժանվեցին և մնացին սառած: Նըրբ-
անցքից և բուֆետից բոլորը շտապեցին դեպի
դահլիճը: Նվազախումբը շփոթվեց և լոեց:

Հազարավոր աչքեր ագահորեն հետևում եյին
կատրժնիկների պես հագնված, կանդալված պա-
րող զույգին: Զույգը պտույտ գործեց ամբողջ
դահլիճում և սլացավ դեպի դուռը:

Ամբոխը հառած հետևում եր նրանց: Լույսը
մի վայրկյան հանգավ և խավարի մեջ պատերից

շտապ ուժեղացող թղթի խշոց թափվեց: Ինչ վոր
բան թոփչք եր գործում, վայր ընկնում և խշալով
հատակի վրա փռվում: Յերկյուղի ճիշերը ճեղ-
քեցին այդ խշոցը: Բայց լույսը վառվեց և կլա-
նեց այդ ճիշերը: Աչքերը մոլորված աջ ու ձախ
եյին վազում և հառում յեռանկյուն ձևով ծալած
թղթի կտորներին, վոր սպիտակ աղավնիների
յերամի նման թափված եյին հատակի վրա:

Կարկամած նայում եյին նրանց և չեյին հաս-
կանում: Բայց մի ուժեղ ձայն նրանց անունն
արտասանեց: — Պըոկլամացիաներ: Յեվ բազմաթիվ
ձեռքեր մեկնվեցին ամեն կողմից դեպի հատակը:
— Տեւը ինձ:

— Կաց: մեկ մեկ, վորպեսզի ամենքին հասնի:

Դոփյուն, աղմուկ, թեքվող մեջքեր, փսփը-
սոց, և հատակը նորից մոխրագույն եր, պսպը-
դում եր:

Լսվեց կարգադրիչի կոչը: Նվազախումբը զլեց:
Զույգերը պտույտ տվին: Յեվ շատերին թվում
եր թե վոչ կատրժնիկ, վոչ կատրժնուհի, վոչ
անակնկալ խավար, յերկյուղ և աղավնիներ չկա-
յին: Այդ բոլորը յերազ եր, ցնորք...

Իսկ գրասենյակի հեռախոսի մոտ կանգնած եր
մի մարդ և բարձր կանչում.

— Պետք ե շրջապատել սեղանատունը և բոլորին
խուզարկել. լկտիացել են...

VIII

Գարնանը, յերբ գործարանում պատրաստվում եին մայովկա տոնելու, Անիկանովները տեղեկացան—Աւեկսեյը փախել եր աքսորավայրից։ Տանը ամենքը լարված եին, և սիրտները ճնշված՝ ինչպես դատից առաջ։ Բոլորը խոսում եին ցածրաձայն. յերեկոները սպասողական տեսդի մեջ եին։ Գիշերը փողոցից հասնող աղմուկը շնչառառ եր անում և ստիպում եր յերկար, լարված սպասել պատուհանի զարկին։

«Բոնած չինեն... Կթակեն», — մղկտում եր միտքը։ Մատվեյը գյուղում վորդու համար ապաստան գտավ և ավելի հաճախ եր անհամբեր մոտենում ջահելների դազգահներին։

— Հը, վոչինչ չի լսվում դեռ...

Մայիսի մեջերը, աշխատանքի ժամանակ, նրան մի տոմս տվին և շնչացին։

— Վորդուցդ ե։

Փոկը յետ քաշեց, նայեց տոմսին և փախավ դազգահից։ Թվաց թե տոմսը բանտից եր.

«Բոնել են, բռնել են նզովվածները»։ Մատվեյը յերկար մենակ ման եր գալիս բակում, գործարանում։ Յերբ հոգնեց, անցավ ներկարարների բաժնի շինության յետև և նստեց բուրյանում,

բացեց տոմսը և ծիծաղեց. Ալյոշկան ազատ եր, հեռու յեր և աշխատում եր գործարանում։ — Կեցցես, զովեց նրան Մատվեյն, և աչքերը փայլեցին։

IX


Տնից-տուն, անկյունից-անկյուն եին անցնում նրանք, մինչև վոր գործարանում մի դավաճան դուրս յեկավ, հենց իրանց շրջանից, զարգացած, բանտում նստած խարաբուզիչ։

Մատնում եր նա զգույշ, սակավ. իսկ յերբ հավաքվելու տեղը փոխեցին և դադարեցին հետը խոսել և բարեկել, նա կատարը սրեց։ Սկսեցին ավելի հաճախ բանտարկել մարդկանց. խուզարկում եին համարյա բոլորին, ում մասին վոր դավաճանը մի բան գիտեր։ Մատվեյի մոտ ել գնացին։ Հարցնում եին կանդալների և վորդու մասին։ Սպասում եին, վոր կգտնեն նրան և նորից կշղթայեն։

«Սխալ եք. դուք դրան չեք արժանանա»։ վճռեց Մատվեյը։

Հենց հետեւյալ որը գնաց այն գյուղը, ուր կանդալներն եին թագցրած, դրեց պայուսի մեջ, ծածկեց և տարավ Ալյոշկայի կնքավոր՝ ներկարար Պանովի մոտ։

— Սանիդ նվերը թագցրու՝ թե չե կկործի։ Ե՞ս, տես ինչ տեղ ե հասել բանը, վոր մոտ մարդուդ ել հավատալը վախ ե։



Պանովը կանդալները պահեց մինչև հեղափոխությունը։ Ազատության առաջին լուրերին Անիկանովները մայրական բերկրանքի արցունքներով հանդիպեցին։

— Միթե տանջանքներիս վերջը հասել եւ իսկ յես կարծում եյի վոր չեմ արժանանալու, չեմ տեսնելու...

Մատվեյն աշխատանքից հետո ամբոխի հետ քաղաք գնաց։ Նրա գլխավերի կարմիր կակաչի պես ծածանվում եր շտապ կարած դրոշակը — նոր, ահազին, պայծառ... Նրա կողքին այնպես փոքր եր յերևում հին, ընդհատակում ընկած դրոշակը... Նա ել արժանացավ, և այժմ հարթում եր իր ստրկության մեջ ստացած ծալքերը։ Գարնան քամին փաղաքշում եր նրան։

Մատվեյն ոգնում եր զինաթափ անելու։ Յեղավ գաղտնի բաժնում, բանտում։ Համբուրվում եր քաղաքական բանտարկյալների հետ։ Գիշերը մի անձունի բուլղոգի հետ միասին հերթ եր պահում փողոցի անկյունում, կոչ եր անում մյուս հերթապահներին։ Մոռացել եր, վոր հիսունից անց եր. այրվում եր, հուզվում եր, բայց չեր հավատում, վոր ազատության որը հասել եր, վախենում եր վոր նորից հրացանազուրկ կանեն նրան։ Շեշտակի

զիտում եր յուրաքանչյուր զինվորին և ծնոտները սեղմում։

Դրոշակների անտառի մեջ՝ զորամասերի տված յերդումը նրա սրտի սառուցը հալեցրին։ Նա հրապարակից գնաց Պանովի մոտ, շնորհավորեց նրան և վերցը կանդալները, վոր պահ եր տվել նրան։ Բաց տանում եր նրանց փողոցով և ցույց տալիս անցնողներին։ Տանը կախ տվեց նրանց ալեզարդ միքուքավոր գիտնականի պատկերի վերև և ասաց։

— Բավական ե ինչքան թագկացաք. այժմ դուք ել ազատ եք։

Այդ որից Անիկանովների մոտ սկսեցին նույն իսկ ոտարներն ել այցելել. հասակավորները — մեկ-մեկ, ջահելները — խմբերով։ Բարեկում եյին և հարցնում։

— Կարելի՞ յե։

— Կարելի յե, կարելի յե...

Մոտենում եյին պատկերին, մտախոճ նայում կանդալներին, կարծես շնչում եյին ողակների բույրը և մտքում պահում այն։

Աշխատանքի ժամերին, յերբ տանը միայն մայրն ու թոռնիկն եյին մնում, մոտ եյին վազում մանուկները, դուռը ծեծում և սրահում յերկար ժամանակ լսելի եյին նրանց ձայները.

— Քուրիկ, թույլ տուր նայենք:

Խմբով ներս եյին խուժում, բոցավառ աչքերը
հառում կանդալների, պատկերի վրա և քշփչում
եյին: Սիրտ առնելով, ձեռքները մեկնում, նախ
զգույշ, ապա ավելի համարձակ շոշափում եյին
ողակները: Մայրը քշում եր նրանց.

— Դե, չարաճճիներ, հեռացեք, խաղալիք գտաք.
բավական ե, գնացեք:

Հարեւանները կատակում եյին նրա և Մատ-
վեյի վրա.

— Զեզ մոտ այժմ կարծես ժամատուն լինի:
Մայրը լուսում եր, իսկ Մատվեյը ժպիտն յերե-
սին ասում եր.

— Թող նայեն: Շուտով վորդիս կգա և կկար-
դադի:

XI

Ալեկսեյը վերադարձավ մի տոն որ, ազատու-
թյան յերկրորդ շաբաթվա վերջը: Յեզ յեկավ
հուժկու, ճկուն, Մատվեյից շատ բարձր, կապույտ
աչքերով: Մատվեյն ուրախությունից շնչարգել
յեղավ, բայց նույն ժամանակ, սիրտը վիշտ
ընկավ—ինչպես՝ փաղաքշես այժմ նրան, ինչպես
ձեռքիդ վրա տռնես,—մեծացել, յերկարացել ե...
Նզովված յերկաթը նույնիսկ չի յել խանդարել,
ում ասես ինքը ձեռքի վրա կառնի, ման կածի,
կմիմիթարի:

Արցունքներն ել պակաս չեյին, ինչպես նաև
գուրգուրանքները: Կանդալներն Ալեկսեյը տեսավ
թեյի ժամանակ և հարցրեց.

— Վողջ են.

— Վողջ են... իրանց բաժինը չարդախներում
անցկացրին:

Մատվեյն ու Ալեկսեյն իրար աչքերի նայեցին
և յերկար ու կուշտ բարձրածայն ծիծաղեցին:
Մատվեյն սկսեց պատմել՝ թե ովինչքան ժամա-
նակ թագցրեց կանդալները և ինչպես փնտում
եյին նրանց: Այստեղ նրանց ընդհատեցին: Խոր-
հրդից ընկերներ յեկան Ալեկսեյին կանչելու:
Կես որին արդեն ամեն տեղ իմացան, վոր նա
յերեկոյան խոսելու յե ժողովին:

Անիկանովները ամբողջ ընտանիքով գնացին
նրան լսելու: Ժողովրդական տան պարտեզը
խոնված եր ամբոխով: Ամբիոնի վրա բարձրա-
նալիս Ալեկսեյին աղմկալից ընդունելություն
արին: Նրա խոսքերը թուչում եյին, ճախրում
եյին, մեկը մյուսի յետեկից նրանց յերամը խտա-
նում եր, զարնվում ամբոխին և զգուշացնում:
Նույնիսկ Վասիլին ըոպեներով սարսուռ եր զգում:
Մատվեյի կուրծքը լայնանում, մարմինը թեթե-
վանում եր: Նա կարիք եր զգում ամբողջ պար-
տիկի առաջ աղաղակելու, վոր Ալյոշական իր վոր-
դին ե, վոր ինքը, ծերունին, ամեն բանում հա-

մածայն ե նրա հետ մինչև վերջին կաթիլը:

Յեվայդ յերեկոյից այդպես ել շարունակվեց: Ալեկսեյին տանը համարյա չելին տեսնում: Տանը սակավ եր գիշերում: Յերեկով, գործի ընթացքում, մի քանի ըոպեյով ներս եր գալիս: Ամեն տեղ սպասում ելին նրան, ամենքին հարկավոր եր նա: Նա հոգնածություն չեր զգում: Լարված դրությունից նրա դեմքը ավելի նրբացավ: Աչքերն ավելի պայծառացան, ձայնն ավելի հնչուն դարձավ:

Մարտի վերջը խորհուրդը նրան մայրաքաղաք ուղարկեց: Գնացքից քիչ առաջ նա տուն վագեց, բոլորին համբուրեց և շտապ ճանապարհ ընկավ:

Անիկանովսերն այլևս չտեսան նրան: Լուր հասավ, վոր մայրաքաղաքում նա ատելություն զգաց դեպի նոր իշխանությունը և իբրև կամավոր՝ ուազմածակատ ուղևորվեց: Իսկ աշնան սկիզբը մի ուրիշ լուր վրա հասավ.—Խրամատներում Ալեկսեյը կոչ եր անում զինվորներին զենքը ձեռքին տուն վերադառնալ և դրա համար հենց իրային-ները սպանեցին նրան:

Մատվեյի գլխին մնացած վերջին սև բծերը մի քանի որվա ընթացքում հալվեցին: Աչքերում բռնկեցին և այդպես ել սառան կեղեքիչ վշտի կանաչ ֆոսֆորագույն կայծերը: Նա նիհարեց և լուակյաց դարձավ: Նունիսկ աշնան, յերբ իշխա-

նությունը բանվորներն ու զինվորներն իրանց ձեռքն առան, նա ամեն ինչի վերաբերմամբ անտարբեր եր. ըստ սովորության յերբեմն հաճախում եր միտինգներ, լսում եր նոր ճառեր, թերահավատ նայում իր շուրջը՝ կարծես մի բան վնասուելիս լիներ մարդկանց դեմքերի վրա, և թմրած հեռանում եր:

XII

Հարուստներին արտաքսում ելին տներից: Խանութները, պահեստները, արհեստանոցները և դպրոցները անցնում ելին խորհուրդներին: Գործարաններն ու յերկաթուղիները կառավարում ելին իրայինները: Կառավարիչներն ու վարպետները սկսեցին կակղել, համեստանալ: Իսկ շտերն ել բոլորովին անհայտացան: Կարծես ավելի ազատ և պարզ եր կյանքը. թվում եր թե բավական ե մի քիչ ջանք, համբերություն և տմեն ինչ լավ կլինի:

Բայց փայտը, ածուխը, հացն ու նավթը հալվում ելին: Յեվ հանկարծ նկատեցին, վոր ապրանքները, սննդեղենը, պարենը անհայտանում են չարդախներում և հորերում: Հանկարծ զգացին և տեսան, վոր չորս կողմը, անկյուններում դարձան են մտել վշտացածները և տեղահան յեղածները ու շշնջում ելին.—«Դե, դե, տեսնենք...

կառուցեք... շինեցեք»... Ծաղրում եյին և լու-
րերով, շշուկներով վհատություն, լքումն և թա-
խիծ սփոռում:

Փողի արժեքն արագ ընկնում եր: Որերն
անորոշ և վտանգալի եյին դառնում: Գործարանում
ամբողջ ձմեռը մի չարախինդ և սպասողական
մթնոլորտ եր տիրում, վոր բոլորի սրտերում
կասկած, հիասթափումն և թմրածություն եր
ներշնչում: Գործարաններն ավելի ու ավելի դան-
դաղ, ծույլ եյին բանում—աշխատավարձը սննդին
հերիք չեր անում:

Իսկ գարնան, աշխատանքի ամենաթունդ ժա-
մանակ, սուլիչներն անսովոր կերպով սուլեցին,
դազգահները կանգ առան, յերկաթը լոեց:

Բանվորները դուրս խուժեցին դեպի բակը և
ամբիոնը, վորից խոսում եյին ճառախոսները,
պահանջեցին դեկավարներին, խորհրդի ներկա-
յացուցիչներին, և աղաղակներով հարձակվեցին
նրանց վրա.

— Այս ի՞նչ որի յեք հասցնում մեզ... ի՞նչի՞ հա-
մար ենք մենք աշխատում:

— Ո՞ւր ե ձեր խոստացած հացը... Սրտ վերջն
ի՞նչ ե լինելու...

— Ո՞ւր մնացին ձեր խոստումները:

— Ամեն ինչ ձեր ձեռքն եք առնում, իսկ
վոչինչ չեք կարողանում շինել...

Ցավ ու զայրույթ եյին ցայտում աչքերից,
բուռնցքները սեղմում, գրգոված և խոպոտ ձայ-
ներով ճառախոսում: Հայհոյում, իրար կշտամբում,
մեղավորներին փնտում, բայց չեյին գտնում:

Մատվեյը նայում եր իր շուրջը առանց հաս-
կանալու, լոռում եր և զգում եր սոսկալին—գոր-
ծարանն այլ ևս չկար, ամենքը ցաքուցրիվ եյին:
Անցյալ գարնան գործարանը գոյություն ուներ.
Կային հազարավոր սրտեր, բայց բոլորը մի սիրտ
եյին, հազարավոր հոգիներ, բայց մեկ հոգի, այո,
այո—մեկ հոգի, մեկ հոգի...

Իսկ Ալյոշկան, նրա խոսքերը, նրա ձայնը, հա-
վատի սարսուռով եյին լցնում, թևեր բացնում...
«Իսկ ուր են նրանք, ինչպես կարելի յե առանց
նրանց, զե վոր»...

Մատվեյն իր միտքը չվերջացրեց, շտապ յետ
նայեց, մի վայրկյան լոեց և խեղդված ձայնով
հազիվ կանչեց.

— Զե վոր նրանք ինձ մոտ են, ինձ մոտ են,—
և վազ տվեց դեպի տուն:

Սիրտը թմբուկի պես զարնում եր: Նա պատից
լուռ վար բերեց կանդալները, պիջակի տակ կո-
խեց և դուռը շրիկացրեց:

Շտապում եր և վախենում եր ուշանալ, բայց
հավատում եր, վոր սիրտն իզուր չի զարկում:

— Խոսք, խոսք տվեք ինձ—ճշով խոնվեց նա
աղմկահույզ ամբոխի մեջ:

— Ի՞նչ խոսք..., ուր ես խցկում:

— Խոսք տվեք:

— Անիկանովին խոսք տվեք:

— Տվեք. Ալեկսեյի հորը խոսք տվեք:

— Տվեք. յեկ, Մատվեյ:

— Շ շ շ...

Ամբիոնի մոտ Մատվեյն այլևս վոչինչ չեր
լսում և վոչինչ չեր հասկանում. ցատկեց վրան
և գոչեց.

— Ահա...—Ծոցից հանեց կանդալներն և բար-
ձրացրեց:

Կանդալների դողանջը բեկրեկեց ձայները:
Մատվեյը սուզվեց հանկարծահաս լոռության մեջ.
մեծ դժվարությամբ կոտրեց այդ լոռությունը և
խռպոտ հարցրեց...

— Տեսնում եք...

Ամբոխը սառն լսում եր: Մատվեյը մեջքն
ուղղեց և ցասումով նորից հարցրեց:

— Բոլորդ եք տեսնում:

— Բոլորս... բոլորս.—սավառնեց ամբոխի
վրայով:

Մատվեյը մի քայլ առաջ գնաց՝ կարծես թե
ուղում եր հարձակվել բոլորի վրա և պատվան-
դանի յեզրից շպրտեց.

— Տեսեք: Շների պես հաջում եք. կարոտել
եք սրանց զբնգոցներին: Կզբնգացնեք, իրար
կրծոտեցեք և կզբնգացնեք: Կշղթայեն, կկապո-
տեն. մեկմեկ կկապոտեն:

Մի բոպեյաչափ կատաղած գոռում եր.

— Կշղթայեն, կկապոտեն:

Լոեց: Զեռքերը կախ զցեց և վայր իջավ պատ-
վանդանից: Նրա խռպոտ գոչից հետո կանդալների
դողանջն ավելի պարզորոշ եր հնչում, մարմին
սարսուցնում և քիչ առաջ լսվող կշտամբանքները
և խլրտող դժգոհությունը ջնջում: Շատերը զգացին
իրանց վրա ցուրտ ողակների շփումը և սարսեցին:
Այդ սարսուռը առաջ քշեց դժգոհներից մեկին դեպի
ամբիոնը: Մատվեյի նման նա ել սուզվեց հան-
կարծահաս լոռության մեջ և դժվարությամբ ճեղ-
քեց այն, գոչելով.

— Մենք մոռացել եյինք այն՝ ինչ վոր Անի-
կանովս ասաց: Յետ դառնալու ճանապարհ չկա...
Պետք ե ինքներս ձեռք զարկենք...

Քիչ եյին խոսակցում: Խոսելը դժվար եր: Գըլ-
խիկոր ցըլեցին: Յեկ դազգահները նորից սկսե-
ցին զբնգալ, յերկաթը մուրճի տակ նորից սկսեց
յերգել:

Գործարանում, քաղաքում և նույնիսկ ամ-
բողջ աշխարհում չլսված անուն ստացավ այդ որը—
«կանդալների խոսքերի որ» անունը:

XIII

Հունձից հետո, մի լուսնյակ գիշեր, քաղաքի շուրջը փոված դաշտերի անդորրի միջից դղրդյուն հասավ։ Հարձակում եյին գործում արյունակիցները, բայց իրար թշնամի։ Գործարանը ճշաց իր սուլիչով և լացեց, վոռնաց՝ խլրտում տարածելով թե բարձունքներում և թե դաշտերում։ Նրա ճիչի յեւեջների մեջ խոնվում եյին վազեվազ հասնող բանվորների մի մասը։ Զինվածները գնացին դղրդոցի կողմը, անզենները խուժեցին դեպի քաղաք։ Իսկ վոմանք ել դռնապաների փոխարեն պահակներ կանգնացրին և սկսեցին արեստանոցների յետեւ հողի մեջ թաղել կիսապատրաստումբերը, պղինձը, պողպատը, գործիքները և մեքենաներից հանած մասերը։

Մատվեյը գործարանում չեր—հիվանդ պառկած ջերմում եր։ Սուլիչի կոչը վիրավորի ճիչ եր թվում նրան, նա ձգտում եր գնալ նրա կողմը, բայց չեր կարողանում վեր կենալ և շտապեցնում եր դանդաղ կոտ Վասիլիյին։

— Գնա, գնա, վասյա, գոնե դեւ գնա, մի դանդաղիր... Տեր աստված, դե մի բարկացնիր ինձ... գուցե ել շտեսնվենք...

Սուլիչի վերջին ճիչը, դղրդող պայթունները, աղաղակներն ու դոփյունը նա այլ ևս չեր լսում։ Միայն առավոտյան, խորին քուն առնելուց հետո,

հատակի վրա նա նկատեց արևի ճառագայթներով հյուսած ցանցը և մտածեց—«կարծեմ լավացել եմ», և շարժվեց։ Պատուհանի մոտ սեղմված կինն ու հարսը յետ նայեցին։

— Քաղաքը վերցրին, բոլոր փողոցները, գործարանը շրջապատել են—շնչաց հարսը։ Տնիցտուն են մանղալիս, ցուցակով կանչում են և դեպի շուկան տանում... Ասում են, վոր կախ են տալու... Վասյան չկա...

— Դե սուս, մի յերկարացնի, ընդհատեց նրան սկեսուրը։ Ավելի լավ ե յեկ թագցնենք նրան։ Վեր կաց։

— Ի՞նձ թագցնեք, — զարմացավ Մատվեյը։ ԶԵմ թագնվի...

— Մատվեյ, սարսափելի յե... Ի՞նձ հանգստացըրու...

— Դու մի վախենար... ինչեր եք հնարում։ Թող նզովեն նրանք.

— Բոլորը թագնվեւմ են։

— Շատ հիմարություն են անում։ Սրահի դուռը շրիկացնելով ներս վազեց սարսափահար թոռնուհին.

— Գալիս են այստեղ... խանութպանը մատնացուց արեց մեզ... պատմում ե նրանց։ Նրա ձեռքին... աֆիցերի ձեռքին թուղթ կա... հետն ել յերեք զինվոր...

Մայրը դես ու դեն ընկավ, հեծկլուց, նստեց
Մատվեյի վոտքերի մոտ և թոռնուհուն իր կող-
քին նստացրեց.

— Նստիր ու սուս կաց: Տեր աստված, մեզ
փորձանքից ազատիր...

Բոլորը լարվեցին: Փողոցից հասնող ձայները
ծակում եյին քոնքերը: Մատվեյը աչքի կոպերը
փակեց, բայց իսկույն բացեց և հուզված հարցը եց.

— Իսկ կանդալները... թագցրու, այ կին, թե
չե՞ կտանեն:

Թոռնուհին վազ տվեց դեպի կանդալները, բայց
քայլի ձայնից յետ ցատկեց և իր տեղը նստեց:
Ներս մտան սպան և զինվորները:

— Ում բնակարանն ե այս: Ահա, այդ դժւ ես
միտինգներում կանդալներով դուրս գալիս: Անի-
կանովը դժւ ես:

Մատվեյը լեզուն շարժեց չորացած բերա-
նում և խռոացրեց.

— Յես եմ:

— Ահա, խռոարկեցեք:

Զինվորները վայր բերին կանանց, նայեցին
մահճակալների տակը և սկսեցին բանալ սնդուկը:

Սպան մոտեցավ ետաժերկին, տեսավ պատից
կախած կանդալները և ասաց.

— Ա... ահա նրանք—և վերցրեց պատից:

Շղթաների ձայնը կրակ տվեց Մատվեյին:

— Կախիր իր տեղը—բղավեց նա:
— Ի՞նչ: Զայնող քաշիր, տես՝ վոր քեզ ել չկախեն:
— Կախիր, բայց նրանց ձեռք մի տա: Քեզ
համար չե, վոր պահպանել եմ:

Սպայի աչքերը բոցավառվեցին և շանթեցին
Մատվեյին: Նա շպրտեց կանդալները սեղանի
վրա և մոտեցավ անկողնին.

— Ի՞նչի՞ համար ես կրել այս կանդալները, այ
հիմար քավթառ. պոլիտիկայի համար: Դե, ասա...

Մատվեյի կինը սկսեց դողալ, չոգեց սպայի
առաջ և թոթովեց.

— Ի՞նքը չի կրել... սուտ ե տառում... վորդու
կանդալներն են... վորդու...

— Իսկ վորտեղ ե վորդին:

— Սպանված ե պատերազմում, սպանված ե...
ականջ մի դնիր պառավին... հիվանդ ե... խելքը
զլիխին չե... յերրորդ որն ե՝ ջերմում ե...

Մատվեյը յերեսը դարձրեց: Նա չարախինդ
և վարանված հայացք գցեց արտասվալից աղեր-
սող կնոջ վրա և խռպոտ արտաքերեց.

— Կրունկները լիզիր, քավթառ...

Սպան զզվանքով հեռացավ դեպի պատուհանը
և անշարժ կանգնած եր՝ մինչև խռոարկությունը
վերջացավ: Միայն մատները ջղային կերպով
թմբկահարում եյին դոբուրի վրա:

— Վաշե բլագորոդյե, վերջացրինք:

— Վոչինչ չկա:
— Վոչինչ չկա:
— Մարշ:

Սպան վերցրեց կանդալները և զինվորների յետևից դուրս գնաց, խուսափելով Մատվեյի աղաղակից և հարսի թոթովից՝ ինչ վոր անհայտացած չթի կտորի մասին:

Մատվեյը ջանում եր դուրս պրծնել կնոջ և թռունիկի ձեռքերից, բայց բոլորովին թուլացավ: Միայն կեսորին խարեյությամբ դուրս յեկավ և վազ տվեց փողոցով: Մտավ կամենդանտի մոտ: Ամենքին հարց ու փորձ եր անում թե ինչպես պտնի այն սպային, վոր կանդալները տարել եր:

— Նրանք իմս են: Իմ վորդունն են,—և հայհոյում եր:

Յերեկոյան նրան ուշագնաց գտան շուկայի մոտ՝ քոնքից մինչև ականջը դոնդաղի թողած կապույտը սոսորագույն հետքով:

XIV

Աշնան առաջին ցրտերին, արվարձանի մարդերով, պահակից վերադառնում եր մի կարմիր-բանակային: Վոտքը կպավ ինչ վոր մի զրնգող բանի և սկսեց խոտի մեջ ձեռքով փնտոել և բարձրացրեց Ալեկսեյ Անիկանովի կանդալները:

Նրանց ողակները ժանդից վոսկու աեսք եյին ընդունել, կոճղները հողից սևացել եյին...

«Գրողը տանի ձեզ»—և կարմիր-բանակայինը թափ տվեց կանդալները: Թողի, թոշնած խոտերի և պոկ յեկած ժանդի հետ քամին թոցրեց կանդալների դողանջը և ցրեց դաշտերում:

Թ Ե Զ Ի Ս Ն Ե Բ

Ն. Լյաշկոյի «Կանդալերի պատմությունը»
մշակելու համար:

1. Այս յերկը պատկերացնում է հին, մինչ-
հոկտեմբերյան կյանքի շրջանը և Հոկտեմբերի
սկիզբը:

Մի քանի պայծառ գծերով հեղինակը նկարում
է, թե ինչպես ինքնակալությունը կեղեքում եր,
և այն միջոցները, վորոնց շնորհիվ ցարիզմը աշ-
խատում եր մթագնել բանվորի գիտակցությունը,
մարել նրա մտածողության ազատությունը, ճնշել
նրա մարդկային արժանավորությունը: (Յեկե-
ղեցին, ծառայության մեջ քծնանքով աչքի ընկ-
նելու սիստեմը, մեծավորների առաջ ստորադրյալ-
ների քծնումի պաշտամունքը և այլն):

Կանդալները ցարական Ռուսաստանի սիմվոլնե.
խայտառակ, ստրկական անցյալի սիմվոլը: Ըն-
թերցողներն այս պատմվածքի միջոցով կարող
են իրենց ներկայացնել այն ժամանակվա բան-
վորի կենցաղի, նրա աշխատանքի պայմանների
պատկերը և փորձ անել դրանք համեմատելու
արդի կյանքի հակումների հետ (իր գործարանում,

ուրիշ գործարանում, եկակուրախաների, լրագրա-
կան տեղեկությունների հիման վրա և այլն):

2. Բայց կանդալները—լոկ անցյալի սիմվոլ չեն:
ինքնակալության պաղպոյլիայում կոփվում եր
բանվոր դասակարգի կամքը՝ մարտնչելու և իր
թշնամուն հաղթելու:

Գործարանում յերբեմն յերեան են գալիս
խուլ, գաղտնի խոռվության նշաններ, առկայ-
ծում են ուղեցույց կրակներ, վորոնք խոսում են
դասակարգային միության և համերաշխության
մասին, այն մասին, վոր վորոշ խավերում բա-
րախում ե կյանքի յերակը, կատարվում ե ընդ-
հատակյա աշխատանք: Այդ մասին ասում ե գոր-
ծարանի խառատի կարճ և խորազգած ֆրազան և
ցարական գերիի՝ Ալեկսեյ Անիկանովի ոգտին հա-
վաքած ոժանդակությունը, և պրոկլամացիաների
ցրումը, և այն՝ թե ինչպես ճարտար կերպով են
թագցնում բանվորները իրանց աքսորված ընկե-
րոջ կանդալները:

Ահա թե ինչու յեն նրանք սիմվոլիք նշանակու-
թյուն ստանում.—«զողանջով պատմում եյին գոր-
ծարանին և քաղաքին՝ ազատության մասին, արթ-
նացնում եյին քնածներին...»:

Այդպիսով խնդիր ե ծագում—հետեւելու բան-
վորական շարժման հիմնական մոմենտներին՝
յերկու հեղափոխությունների միջև գտնված

ժամանակաշրջանում, շեշտելով Հոկտեմբերի
նախապատճառները և այդ մոմենտները համե-
մատելով պատմվածքի փաստական նյութերի հետ:

3. Թուսական պրոլետարիատի կազմակերպված
մասսաներն իրանց առաջնորդների ղեկավարու-
թյամբ ցարիզմը տապալեցին, բուրժուազիայի
ձեռքից իշխանությունը խլեցին, կործանելով
զանազան «ազատությունների» իլյուզիան և հաս-
տատեցին բանվորական դիկտատուրա:

Սակայն թշնամի տարրերը գլուխ բարձրացրին
և տարբեր միջոցներով—սաբուտաժով, ստորբնազդ-
ների վրա խաղալով, հաճախ զենքով—աշխատում
են խանգարել, կործանել բանվորի գործը:

«Չորս կողմը, անկյուններում դարան են
մտել վշտացածները և տեղահան յեղածներն ու
շնչում են.—դե՛, դե՛, տեսնենք, կառուցեք...
շինեցեք»...

Միակ յեկն ե—հաղթել դժվարությունները,
փլըզումը, վոչնչացնել ֆիզիքական թշնամիներին.
հարկավոր են «կանդալային խոսքեր»՝ փոքրոպե-
ներին քաջալերելու համար, վորովհետեւ՝ «յետ
դառնալու ճանապարհ չկա»:

Հեղինակը լոկ ընդհանուր գծերով, եսքիզով
նկարում է ընդհանուր փլըզումի և քաղաքացի-
ական կովի մոմենտը: Այստեղ կարելի յե կատա-
րել կովի առաջին շրջանների պատկերների նկա-

րագրության քննություն՝ առանձին դրամատիք
տեսարանների շեշտումով—սպիտակների յերեան
դալը Անիկանովների խրճիթում (այդ տեսարանը
կարող ե բեմադրվել), Ալեկսեյ Անիկանովի բնույ-
թագրով. սրա անձնավորությամբ հեղինակը դուրս
ե բերել իսկական բանվորներին—հեղափոխու-
թյան մարտիկներին, վորոնց անունները՝ կապ-
ված են Հոկտեմբերյան որերի առաջին հաղթու-
թյունների հետ:

ԽՈՐՀՐԴ. ՍՊԸ. ՀԱՆ. ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
— ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ —
Մոսկվա, Նիկոլսկի փող. № 10

Լ Ո Ւ Յ Ա Ե Ն Տ Ե Ս Ե Ս Ե Լ

| | Գ Ի Ն Բ |
|--|------------------|
| Լենինի ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՍՐԴՈՒԹՅԱՆ | 15 կ. |
| Լենինի ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ԺՈՂՈՎՈՒՐԸ. ՄԱՍԻՆ. Կազմեց Ն. Կրուպսկայա 20 կ. | |
| ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՈՒՂԻՆ և ԲԱՆ.-ԳՅՈՒՂ. ԴԱՇԻՆՔԸ, —Ն. Բուխարին 1ր. 25 կ. | |
| ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑ, —Ի. Ստալին | 50 կ. |
| ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ, —Ի. Ստալին (272 էջ) | 1 ր. 50 կ. |
| ՀԱՄ. ԿՈՄՈՒՆԻՍՏ. ԿՈՒՍԱԿ. (բ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, Վ. Վոլոսկիչ 1ր. 50 կ. | |
| ՊԱՅՔԱՐԻ ՅԵՎ. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՄԸ ՏԱՐԻ | 70 կ. |
| 1905 թ. ՄԵՐ 1 ԲԱՆ.-ԳՅՈՒՂ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, Ի. Ֆլերովսկի 70 կ. | |
| ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒԾ. XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ, Ն. Ելիզարով | 30 կ. |
| ԻՆՉ ՎՈՐՈՇԵՑ ԿՈՒԾ. XV ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ.—Գ. ՌԵԿԼԻՆ | 20 կ. |
| ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ 1905-ին, —Ա. Կարենյան | 70 կ. |
| ԻՆՉՊԵՍ ԱՇԽՈՒԺԱՑՆԵԼ ԳՅՈՒՂԱՌԴՈՒՐԴՆԵՐԸ, —Զ. Լավրենտյան 30 կ. | |
| ԽՍՀՄ ՅԵՎ. ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ, —Ա. Արշարունի 30 կ. | |
| «Ի. ՍՏԱԼԻՆ» (համառ. կենսագր.) կազմեց՝ Իվ. Տովտոսյան | 7 կ. |
| ԿԼԱՐԱ ՅԵՎԿԻՆ (կենսագր.), —կազմեց Զ. Բոյարսկայա | 15 կ. |
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՑՆԵՐ (Կոմս. հմք.) ըստ Վիրգանսկու, պլակ I, 50 կ. | |
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՑՆԵՐ | " պլակ II, 50 կ. |
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՑՆԵՐ | " պլակ III 50 կ. |
| ՀՈԿՏԵՄԲԵՐ | 10 կ. |
| ՊԱՏԵՐԱԶՄ ԶԵՆՔ ՈՒԶՈՒՄ, ԲԱՅՑ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ԴԻՄԱԴՐԵԼՈՒ 10 կ. | |
| ԻՆՉՈՎ. Ե ՈՒԺԵՂ. ԿԱՐՄԻՐ-ԲԱՆԱԿԸ | 15 կ. |
| ՄԱՐԴՈՒ և ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ, —Դ. Աղոլ | 35 կ. |
| ԻՆՉՊԵՍ Ե ԱՌԱՋԱՅ. և ԶԱՐԳ. ԿՅԱՆՔԸ ՅԵՐԿՐԻ ՎՐԱ, —Գրեմյացի 50 կ. | |

| | |
|--|-------|
| ԻՆՉՊԵՍ Ե ՄԱՐՔՎԱԾ ՏԻՅԵԶԵՐՔԸ, —ակադեմիկոս Դ. Գրավե | 50 կ. |
| ՎՈՐՈԾ, ԿԱՅԾԱԿ և ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, —Մ. Գրեմյացի | 40 կ. |
| ԱՐԵՎԸ, ՆՐԱ ՎՈՐԴԻՆԵՐԸ և ԹՈՌՆԵՐԸ, —Բ. Սեմեյկին | 40 կ. |
| ՄԱՐԴՈՒ ԱՆՏԵՍԱՆՆԵԼԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒՆԵՐԸ, | 15 կ. |
| ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, —Վ. Յաղվիցի | 15 կ. |
| ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԳՅՈՒՂ. ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹ. ԱՆՑԿԱՅՆԵԼ 20 կ. | |
| ՏԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՍՆԱԿԱՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, —Վ. Դմիտրյան | 15 կ. |
| ԳԵՂ ԿԱՆԳԱՆԻ ԳԵՐԱՆ ԿԿՈՏՐԻ (կոռպերացիան գյուղում), Լ. Ի. ԱՍՏՈՒ ԿԱՄՔԸ, ԹԵ ԳՅՈՒՂԱՏՆՏ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, —Ի. Պ. | 30 կ. |
| ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹ. ԱՅԲՈՒԲԵՆԵԼ | 20 կ. |
| ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՐԱՇՏԻ ԺԱՄԱՆԱԿ, —Պ. Վլասով, | 30 կ. |
| ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ, —Մ. Լիվինսկի | 40 կ. |
| ԱՌԱՋԻՆ ՈԴՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՎԱՆԴ ԿԵՆԴԱՆՈՒՆ, Ա. Սկոմորոխով | 20 կ. |
| ՀՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 17 կ. |
| ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ ԿԱԹՆԱՌԱՍ ԿՈՎ, —Բ. Սկոմորոխով | 12 կ. |
| ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳԵՐՄ. ՍՏԻՊԵՅ, ՎՈՐ ԿՈՎԸ ՏԱՐԻՆ 2 ԱՆԳԱՄ ԾՆԻ. 15 կ. | |
| ԻՈԶԸ ԳՅՈՒՂԱՅՈՒ ԿԵՐԱԿՐՈՂՆ Ե, —Ե. Լիխաչև | 18 կ. |
| ՄՈՐ ԱՅԲԲԵՆԱՐԱՆՆԵՐԸ, —Գ. Սպերանսկի | 16 կ. |
| ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, —Բ. Գինոբուրգ | 30 կ. |
| ԳՅՈՒՂԱՑ. ՊԱՀԱՆՁՆԵՐԸ և ԽՈՐՀՄԴ. ԴՊՐՈՅՏԻ ԾՐԱԳՐՆԵՐԸ | 12 կ. |
| ԳԵՂՉԿՈՒՀԻՆ և ՅԵՐԵԽԱՆԵՐԸ | 25 կ. |
| ՄԵԹՈԴԱԿԱՆ ԶԵՐՆԱՐԿ (ուսուցիչների համար) | 70 կ. |
| ՀԱՍՏՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ԱՍՏԻՃ. ԴՊՐՈՅՏՈՒՄ, Բ. Ժավորոնկով | 65 կ. |
| ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ և ԴՊՐՈՅՑԸ | 40 կ. |
| ՊԱՏԱՆԻ ԴԻՌՆԵՐ (ժողովածու) | 60 կ. |
| ՊԻՌՆԵՐ, ՊԱՀՊԱՆԻՐ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԻ, —Յ. Ռադին | 10 կ. |
| ՊԻՌՆԵՐ, ՀԵՏԵՎՀԻՐ ԼԵՆԻՆԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԻՆ | 15 կ. |
| ԼԻՆԵՆՔ ԱՌՈՂՋ և ՈՒԺԵՂ, —Ն. Ֆայլիներ. մաս I, | 40 կ. |
| ԼԻՆԵՆՔ ԱՌՈՂՋ և ՈՒԺԵՂ. » մաս II, | 45 կ. |
| ԹՈՍ, ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ ՆՐԱ ԴԵՄ, —բժ. Նադեյին | 20 կ. |
| ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ, —Վ. Բրոններ | 25 կ. |
| ՄԵՐ ԱՎԵՐ ՅԵՂԲԱՅՐՆԵՐԸ—ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԸ | 20 կ. |
| ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍԱՔՈՆ ԿԱՐՄԻՐ-ԲԱՆԱԿԱՆ ԴԱՐՁԱՎ.—Կրավչենկո | 35 կ. |
| ԿԱՐՄՐԱՄԱՐԹՆԵՐԸ, —Վ. Խեթինեկով | 45 կ. |
| ՅԵՐԿՐԻ ԽՈՐՔԵՐՈՒՄ, —Ա. Կուպրին (նկարագրգ) | 18 կ. |
| ՔԻՄԻԿՈՍ ԿՈՒԶԿԱՆ, —Պ. Որլովից (նկարագրգ) | 28 կ. |

| | | | | |
|---|--------------|------------------------|---------------------|-------|
| ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ | ԱՅԵՐՈՊԼԱՆՈՎ, | —Պ. | Որլովեց (նկարագարդ) | 22 կ. |
| ՄՈՇԱԿԻ և ԱՐՁԻ ՄԱՍԻՆ (հեքիաթ) | —Դ. | Մամին-Սիբիրյակ (նկար.) | 15 կ. | |
| ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ՏԻԿՆԻԿՆԵՐԸ (նկարագարդ) | | | 16 կ. | |
| ՄԻՆԻՍՏՐ ՄԵԿ ԺԱՄՈՎ, | —Ֆը. | Ֆուկս (նկարագարդ) | 18 կ. | |
| ԱՆՁՆՎԵՐ ՏՂԱՆ,—Եղմոնդո դ'Ամիչիս (նկարագարդ) | | | 12 կ. | |
| ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍՈՒՀԻՆ,—Ռուդա (նկարագարդ) | | | 12 կ. | |
| ԹՌՉՈՒՆՆԵՐ (գունատիպ այլբոմ յերեխաների համար) | | | 25 կ. | |
| Հ. ՊԱՐՈՒՅՐՆ (ընտիր յերկեր), պլրակ I | | | 40 կ. | |
| " " " | պլրակ II | | 35 կ. | |
| " " " | պլրակ III | | 35 կ. | |
| ՅԵՐԻՏԱՍՍԱՐԴ ԳՐՈՂԸ: ՄԱՐԴԸ, —Մաքսիմ Գորկի | | | 15 կ. | |
| ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ,—Ա. ՍԵՐԱՓԻՄՈՎԻՀ | | | 45 կ. | |
| ՄՐՐԿԱՀԱՎԸ և ՈՒՐԻՇ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ,—Մաքսիմ Գորկի | | | 10 կ. | |
| ՅԵՐԿՐԱՇԱՐԺ (պատմվածք) | | | 25 կ. | |
| ԱՐՏԱՍՈՎՈՐԸ, —Մաքսիմ Գորկի | | | 40 կ. | |
| ԿԱՆԴԱԼՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, —Ն. Լյաշկո | | | 25 կ. | |
| ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԱՏՄՎԱԾՔ, —Ա. Ցակովիկ | | | 20 կ. | |
| ԸՆԿ. ՎԱԼԻԱ, —Մ. Յուրին | | | 15 կ. | |
| ԶԱՊԱՅԵՎ, —Ֆուրմանով | | | 50 կ. | |
| ԶԱՂԱՅՊԱՆ ՈՏՈՊԱՅ, —Ա. Յըրով | | | 20 կ. | |
| ԳԱՅՅԵՐ, —Ֆ. Գլադկով | | | 25 կ. | |
| ՄԱՅՐԸ, —Ֆ. Բերեզովսկի | | | 45 կ. | |
| ՄԵԾ ՏԱՍՆԱՄՅԱԿ (այլբոմ) | | | 50 կ. | |
| ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐ. ՀԱՄԱՐ | | | | |
| ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՏԵՐԻԱԼԻ ԶՄ (քրեսթոմատիա, 15 մամուլ) | | | | |
| ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՀԱՅԱՍՏԱՆԸ | | | | |
| ՅԵՐԵՔ ԻՆՏԵՐՆԱՅԻՆԱԼ | | | | |
| ԿՈՄՅԵՐԻՏՄԻԱՀՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ | | | | |
| ՀԵՌԱԳԻՐ, ՀԵՌԱԽՈՍ և ՌԱԴԻՈ | | | | |
| ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ (նկարագարդ), 15 գրքույկ. | | | | |
| ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ՈՌԻՍ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐՈՂՆԵՐԻՑ, 15 գրքույկ. | | | | |
| ՅԵՎ ՈՒՐԻՇ ԳՐՔԵՐ (պահանջեցեք մեր գրացուցակը): | | | | |



20 ЧПМ.

(204)

28385

A II
38865



НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Н. ЛЯШКО. Рассказ о кандалах

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СОЮЗА ССР
МОСКВА, ЦЕНТР, НИКОЛЬСКАЯ, 10.